



# Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Աշխատանքային խորհրդակցություն



Մարտի 9-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Վալերիյ Օսիպյանը խոսեց ոստիկանության ծառայողների սոցիալական վիճակի և դրա բարելավմանն ուղղված աշխատանքների մասին, կարելի էր ծառայության մեջ աչքի ընկած ոստիկաններին պարգևավճարներով խրախուսելու և մի շարք այլ խնդիրներ:

Քննարկվող հարցի շուրջ պարզաբանումներ ներկայացրին ոստիկանության պետի տեղակալները, շտաբի

պետն ու ֆինանսային տնօրենի վարչության պետը:

Ոստիկանության պետը նշեց, որ թեև հանցավորության դեմ պայքար



ընդհատված ծառայությունը, այդ թվում՝ գիշերային ծառայությունները, որոնց ընթացքում թե՛ կանխվում, թե՛ բացահայտվում են հանցագործություններ:

Կարելի էր ասել, որ օրինակ զենք-զինամթերքի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման աշխատանքների ուժեղացումը, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, բնակարանային գողությունների բացահայտման աշխատանքները:

Ոստիկանության պետը հակիրճ ներկայացրեց նաև ոստիկանության

գործունեությանը վերաբերող օրենսդրական ու կառուցվածքային փոփոխությունները:

Խորհրդակցության ավարտին 2018 թվականին բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկած ոստիկանության մի խումբ ծառայողներ պարգևատրվեցին մեդալներով ու պատվոգրերով:

րում կան դրական միտումներ, սակայն պետք է չթուլացնել աշխատանքն ու նույն ինտենսիվությամբ շարունակել ծառայել՝ շեշտը դնելով հատկապես օպերատիվ գործունեության որակական բարելավման վրա:

Վալերիյ Օսիպյանի խոսքով՝ չափազանց դրական արդյունք է տվել ուժեղացված ծառայությունը, այդ թվում՝ գիշերային ծառայությունները, որոնց ընթացքում թե՛ կանխվում, թե՛ բացահայտվում են հանցագործություններ:

Ոստիկանության պետը հակիրճ ներկայացրեց նաև ոստիկանության գործունեությանը վերաբերող օրենսդրական ու կառուցվածքային փոփոխությունները:

Խորհրդակցության ավարտին 2018 թվականին բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկած ոստիկանության մի խումբ ծառայողներ պարգևատրվեցին մեդալներով ու պատվոգրերով:

## Հանդիպում ՃՈ ղեկավար կազմի հետ

Մարտի 9-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն աշխատանքային խորհրդակցություն անցկացրեց ճանապարհային ոստիկանության ղեկավար կազմի հետ:

Ոստիկանության պետը նշեց, որ այսօր արդեն քաղաքացիներից շատերն են դրական արտահայտվում ճանապարհային ոստիկանության ծառայության մասին, մայրաքաղաքում համեմատաբար նվազել են խցանումները, կա նաև ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով զոհերի թվի նվազում:

Վալերիյ Օսիպյանը խոսեց նաև մարզերում ճանապարհային ոստիկանության ծառայության որակի բարձրացման, նախկինում տրված ցուցումների ու հանձնարարականների, դրանց կատարման ընթացքի, թերությունների ու բացթողումների մասին: Ոստիկանության պետը շեշտեց, որ կարգազանց վարորդների նկատմամբ անհրաժեշտ է լինել խիստ և սկզբունքային:

«Օրենքի առաջ հավասար են բոլորը, անկախ պաշտոնից, դիրքից, մեքենայի մակնիշից ու համարանիշից, հարկավոր է ծառայել համարձակ, իսկ կաշկանդված ոստիկանները, որոնք իրենց անգործությունով կասկածի տակ կրեն ոստիկանի պատիվն ու արժանապատվությունը, համակարգում տեղ չեն ունենա»:



Վալերիյ Օսիպյանը ցուցում տվեց մեթոդներ ու մեխանիզմներ մշակել ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով զոհերի թվի նվազեցնելու ուղղությամբ: Անդրադառնալով կոռուպցիոն դրսևորումներին՝ նա շեշտեց. «Մենք ոչ ենք ասել կոռուպցիային: Կոռուպցիոն դրսևորում ցուցաբերած ոստիկանության ցանկացած ծառայող, իր վերոդասի հետ, կպատժվի խստագույն»:

Քննարկվեցին նաև ճանապարհային երթևեկության անվտանգությանը վերաբերող այլ հարցեր:

## Հետախուզվում էր սպանության համար

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները տեղեկություններ էին ստացել, որ Վրաստանի երեք քաղաքացի ապօրինի հատել են հայ-վրացական սահմանը և գտնվում են Հայաստանում: Նրանցից մեկը Վրաստանի իրավապահների կողմից հետախուզվում է սպանության մեղադրանքով:



Նրանց հայտնաբերելու նպատակով տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկվեցին: Սերգեյ Քուռոյանը, Ջուրաբ Կվատաձեն և Շոթա Ցագարեիշվիլին հայտնաբերվեցին մայրաքաղաքի Բակունցի փողոցում: Հետախուզվողը 38-ամյա Ցագարեիշվիլին էր: Նա Վրաստանի ՆԳՆ Թբիլիսի քաղաքի ոստիկանության ղեկավարամեմտի կողմից հետախուզվում էր երկու կամ ավելի անձանց սպանության և ապօրինի զենք փոխադրելու կամ կրելու մեղադրանքով:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում ապօրինի սահմանափակման փաստով նախապատրաստված նյութերը, Սերգեյ Քուռոյանը և Ջուրաբ Կվատաձեն ներկայացվել են Ազգային անվտանգության ծառայությանը:

Շոթա Ցագարեիշվիլին կալանավորվել է: Նրա հայտնաբերման մասին տեղեկությունը փոխանցվել է հետախուզումը նախաձեռնող մարմնին:

## Սպանություն երեւանում

Մարտի 4-ի կեսգիշերին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին ահազանգ ստացվեց, որ Միքայելյանի անվան հիվանդանոցի մոտակա տնրից մեկուսման սահմանում մարդ կա:



Ոստիկանության օպերատիվ խումբը մեկնեց նշված վայր: Բակունց հայտնաբերվեց տանտիրոջ՝ 50-ամյա Արմեն Փարսադանյանի արնաշաղախ դիակը:

Պարզվեց՝ վիճաբանել էին երկու հարեւանները, այդ ընթացքում 42-ամյա Արմեն Մուրադյանը երեք կրակոց էր արձակել ու սպանել հարեւանին:

Չեռնարկված միջոցառումների ընթացքում տեղեկություններ ստացվեցին, որ Արմեն Մուրադյանը թաքնվում է Վանաձորում բարեկամի տանը:

Բացատրական աշխատանքների արդյունքում Արմեն Մուրադյանը ներկայացավ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին և խոստովանեց, որ ինքն է սպանել հարեւանին:

Հարուցվել է քրեական գործ:

## Սպանություն Բերդում

Մարտի 6-ին ոստիկանության Տավուշի բաժին գանգաձակ տղամարդը հայտնում էր, որ Բերդ քաղաքի Տերյան փողոցում բնակվող ծանոթի տան դուռը բաց է, բայց տանտնը չի արձագանքում կանչերին: Նշված հասցե մեկնած ոստիկանները հայտնաբերեցին տանտիրոջ՝ Սեւան Նավասարդյանի դիակը, որի արտաքին զննությամբ աչք թուներ շրջանում հայտնաբերվեց բութ գործիքի հարվածից ստացած վնասվածք:



Չեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ Սեւան Նավասարդյանի գլխին մուրճով խփել ու սպանել էր Բերդի բնակիչ Նվեր Գինոյանը: Նա հայտնաբերվեց և, սպանություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Տավուշի բաժին:

Նախնական տվյալներով՝ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում առանձնատան բակում Գինոյանը փայտով խփել էր Նավասարդյանի գլխին, ապա անգիտակից տղամարդուն տեղափոխել էր տուն և մուրճով հարվածներ հասցրել:

Հարուցվել է քրեական գործ:

## Վաօրիկություններ Հնարերդում

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ Արագածոտնի մարզի Հնարերդ համայնքի ղեկավարը թույլ է տվել ապօրինություններ:



Մասնավորապես՝ 2011 թ. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում «Հնարերդ համայնքի արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին հատկացվել էր 76 միլիոն 300 հազար դրամ արժողության գյուղատնտեսական տեխնիկա, որի 20 տոկոսը՝ շուրջ 15 միլիոն 260 հազար դրամ, պետք է վճարվեր կոոպերատիվի միջոցներից:









Հասարակություն

Հանրապետության ճանապարհներին

Մարտի 10-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Իջևան-Մայիսյան կամուրջ-Նոյեմբերյան ճանապարհի 5-րդ կմ-ին դուրս էր եկել երթուղիի գոտուց և կողաշրջվել...

Մարտի 11-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Տերյան փողոցում վրաերթի է ենթարկել 30-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Մարտի 11-ին «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Սարալանջի փողոցում վրաերթի է ենթարկել 8-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Մարտի 11-ին «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Ռուբինյանց փողոցում վրաերթի է ենթարկել 18-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Մարտի 11-ին «ՎԱԶ-21121» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու փողոցում վրաերթի է ենթարկել 25-ամյա քաղաքացու և իր մեքենայով տեղափոխվել հիվանդանոց:

Մարտի 11-ին Արմավիրի մարզի Արշալույս գյուղում իրար են բախվել «Ֆորդ Տրանզիտ» և «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենաներ...

Մարտի 11-ին «ՎԱԶ-31105» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Իջևան քաղաքի Սպանդարյան փողոցում վրաերթի է ենթարկել 8-ամյա տղայի և իր մեքենայով տեղափոխվել հիվանդանոց:

Մարտի 12-ին «Սերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Հր. Ներսիսյան փողոցում վրաերթի է ենթարկել մի քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Մարտի 12-ին «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան Մասիս-Նորամարտ ճանապարհի 1-ին կմ-ին դուրս է եկել երթուղիի գոտուց ու կողաշրջվել...

Մարտի 12-ին «Սերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի կամրջի մոտ վրաերթի է ենթարկել 82-ամյա քաղաքացու...

Մարտի 12-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Արմյան քաղաքի Սահմանադրության հրապարակում վրաերթի է ենթարկել 18-ամյա քաղաքացու...

Մարտի 12-ին «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Կոտայքի մարզի Բալախովա գյուղում վրաերթի է ենթարկել 64-ամյա քաղաքացու...

Մարտի 12-ին «Նիսան» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Սեղիի ճանապարհի 202-րդ կմ-ին դուրս է եկել ճանապարհի երթուղիի գոտուց և ընկել դաշտը...

Մարտի 12-ին «ՎԱԶ-2101» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Սեղիի ճանապարհի 68-րդ կմ-ին բախվել է «Սերսեդես E» մակնիշի ավտոմեքենայի...

Հայտնի է, որ ժամանակակից աշխարհում լուրջ խնդիրներից մեկը անօթեան մարդկանց խնդիրն է: Անգամ ամենազարգացած երկրներում կա այդ խնդիրը: Նրանք ամեն օր աշխարհի մեծ ու փոքր քաղաքներում դուրս են գալիս իրենց անկյուններից ու սկսում յուրովի լուծել իրենց հանապազօրյա հարցերը:

Տարիներ առաջ Օմսկ քաղաքում սկսեցին անհետանալ անօթեանները: Դա արագ նկատեցին այն մարդիկ և կազմակերպությունները, որոնք օգնության ձեռք էին մեկնում նմաներին: Որոշ ժամանակ անց քաղաքի տարբեր հատվածներում գտնվեցին կորած անօթեանների դիակներ:

Երբ հայտնաբերվեց հինգերորդ դին, միլիցիան հասկացավ, որ չի կարելի անուշադրության մատնել երեւոյթը: Եվ սկսվեց տարօրինակ գործի հետաքննությունը: Անհասկանալի էր, թե ում կարող էին խանգարել այս մարդիկ, ո՞վ կարող էր սպանել մարդկանց, որոնք ոչինչ չու-

նեին, որոնցից ոչինչ չէր կարելի հափշտակել:

Դիակների թիվն աճում էր, իսկ քրեական գործը տեղից չէր շարժվում: Միլիցիան ավելի կազմակերպված ծառայու-



Չեղարկված «հասցիա»

թյան անցավ քաղաքում: Վերջապես գտան հետքը: Ոմն Վալինը այն անուն էր, որին փնտրում էին: Մամուլը նրան կնքեց Մաքրող մականունով: Վալինս իր պարտքն էր համարում քաղաքի փողոցները մաքրել «կեղտից»: Նա այդպես էր անվանում անօթեան քաղաքացիներին և նրանց, ովքեր զբաղվում էին կեղտոտ աշխատանքով:

Առեւանգման գործընթացը դժվարություն չէր ներկայացնում. անաշխատանք և անօթեան քաղաքացիների ցանկացած գործի համաձայնում է, միայն թե գումար վաստակի: Վալինը խաբեությանը նրանց

բերում էր իր բնակարան, և այնտեղից այնտեղ ողջ դուրս չէին գալիս: Տանտերը դաժան խոշտանգումներով փորձում էր կյանքի նոր ուղու վրա կանգնեցնել անօթեաններին ու մարմնավաճառներին:

Բայց ապարդյուն: Ոչ մեկն արժանի չէր ապրելու այս աշխարհում և իր տեղը պետք է գիշեր արժանիներին: Նման վարքագծի դրսևորումը ո՞չ միլիցան կարողացավ բացատրել, ո՞չ փորձառու հոգեբանները: Վալինը նույնպես որեւէ բացատրություն չստացավ իր արարքների համար: Պարզապես խոստովանեց մեղքը և պատմեց, թե որտեղ է թաղել այն դիերը, որոնք միլիցիան դեռ չէր գտել:

Բժշկական համալիր փորձաքննությունների արդյունքում պարզվեց, որ Վալինը մեղսուհի է և կարողանում է պատասխան տալ իր արարքների համար: Բժիշկ-փորձագետի հարցին, թե՞ զոջո՞ւմ է կատարածի համար, պատասխան ասպեցուցիչ էր. ոչ միայն չէր զոջում, այլև ինքնապարտության դեպքում կշարունակեր քաղաքը «մաքրել» նմաներից:

Վալինը մեղսուհի ճանաչվեց և դատապարտվեց ցմահ ազատազրկման: Պատիժը կրում էր ուժեղ ռեժիմի գաղութում: Ազատազրկվելուց մեկ տարի անց նա բախտախցում ինքնասպանություն գործեց: Նրա հաշվին ավելի քան քսան հինգ զոհ կար: Իսկ թե իրականում քանի՞սն էին, այդպես էլ անհայտ մնաց: Գաղտնիքը Վալինս իր հետ այն աշխարհ տարավ...

21-րդ դարի ծովահենները

2019 թ. հունվարի լույս 2-ի գիշերը աֆրիկյան Բենին պետությանը պատկանող ջրերում՝ Գվինեյան ծովածոցում, ծովահենները զավթում են «MSC Mandy» բեռնատարը, որը լողում էր Պա-

նամայի դրոշի տակ: Անձնակազմի անդամների թվում էին նաեւ Ռուսաստանի Դաշնության բաղադրանքները: Բեռնանավը զավթել էին սպառազինված ինը աֆրիկացիներ: Նրանք պատանդ վերցնելով վեց հոգու, այդ թվում՝ նավապետին, հեռացել էին՝ նավում թողնելով անձնակազմի տասնութ անդամների:

վիճակը: Ծովահենային հարձակումների առաջատարը Նիգերիան է, որը Աֆրիկայի ամենաբազմամարդ երկիրն է: Նիգերիան Աֆրիկայի նավթի առաջատար արտահանողն է, ինչի շնորհիվ նրա տնտեսությունը



բարգավաճում է և արդեն առաջ է անցել Հարավաֆրիկյան Հանրապետությունից: Որքան էլ զարմանալի է, Նիգերիայի բնակչության ճնշող մեծամասնությունը ծայրահեղ աղքատ ու թշվառ վիճակում է: Բացի այդ, երկիրը գտնվում է բավական անկայուն վիճակում՝ հյուսիսում բնակվում են իսլամ, իսկ հարավում քրիստոնեություն է աֆրիկյան հավատալիքներ դավանող ժողովուրդներ:

Հաջորդ «ծովահենային» երկիրը Բենինն է: Նիգերիայի և Բենինի ծովահենները միավորված են լավ զինված ու կազմակերպված հանցախմբերի մեջ, որոնք հիմնականում գործում են իրենց պետությունների ափամերձ ջրերում, ոչ թե բաց օվկիանոսում: Դա հնարավորություն է տալիս գրեթե անպատիժ մնալ, քանի որ օտարերկրյա ռազմաճակատները, համաձայն միջազգային իրավունքի, չեն կարող մտնել Նիգերիայի կամ Բենինի տարածքային ջրերը առանց համապատասխան թույլտվության:

Մի շարք դեպքերում ծովահեններն իրենց ներկայացնում են որպես զինված պայքար մղող քաղաքական կազմակերպություն, ինչպես, օրինակ՝ «Բիաֆրիի տեղաբնիկները»: 1960-ական թթ. իզբը կոչվող բնակիչները զինված պայքար էին

սկսել Բիաֆրի անունով սեփական պետություն հիմնելու համար, սակայն, ի վերջո, պարտություն կրեցին և մտան Նիգերիայի կազմի մեջ:

Քաղաքական քողի տակ է գործում մեկ այլ կազմակերպություն՝ «Նիգերի դեմոկրատիկ ազատագրման շարժումը», որը հանդես է գալիս երկրի բնական ռեսուրսների ազգայնացման համար: Այս կազմակերպության անդամները ժամանակ առ ժամանակ պայթեցնում են նավթուղիները, հարձակվում նավթային ընկերությունների և ոստիկանական պարեկախմբերի վրա:

Սովորաբար նավաստիների կամ նավի առեւանգումից հետո սկսվում են բանակցություններ նավատերերի կամ նավային ընկերության ներկայացուցիչների հետ: Նույնը եղավ նաեւ Բենինի ջրերում

պատանդ վերցված Ռուսաստանի քաղաքացիների հետ: Սկսվում է առեւտուր, որի ժամանակ միջնորդն աշխատում է իջեցնել փրկագինի գումարը: Խոսքը գնում է մի քանի տասնյակ հազար դոլարի մասին: Գործարքի մանրամասնությունները գաղտնի են պահվում, քանի որ մի շարք երկրներում փրկագին վճարումը ենթակա է քրեական պատասխանատվության: Այս դեպքում նավատերը դիմում է մեծ քանակությամբ նրան մասնագիտացած բրիտանական ընկերությանը, որը կապ է հաստատում ծովահենների հետ: Խնդրի ուժային որոշումը գրեթե անհնար է, քանի որ ծովահենները գերազանց կողմնորոշված են ջունդիկում, կարող են տեղական ժամանակ անհայտ մնալ հատուկ նշանակության ստորաբաժանումների և ոստիկանության համար: Բացի այդ, ծովահենները կապեր ունեն տեղական իշխանությունների հետ և ստացված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս խուսափել ոստիկանությունից: Եթե ուժային գործողությունը անհաջող էլք է ունենում, ծովահենները նախընտրում են սպանել պատանդներին, ուստի առավել ձեռնառու է բանակցություններ վարելը և փրկագին վճարելը:

Պատրաստեց Ռուբեն ՍԱՅԱՅԱՆ







Complex grid with various text boxes, arrows, and a portrait of a man in the center. The grid contains various words and phrases, some with arrows pointing to specific cells.



Ուշադրություն (Attention) section with a logo and text regarding a competition or event. It includes details about prizes and contact information.

Կեսի - Կենտրոնացրեք ձեր հետաքրքրությունների վրա, ինչը հնարավորություն կտա ամրապնդելու դիրքերը:



Մարտի 15.03 - 21.03 Մարտի 15-ը և 21-ը համարվում են Մարտի 15-ի և 21-ի օրերը:

Մարտի 15-ը և 21-ը համարվում են Մարտի 15-ի և 21-ի օրերը: Մարտի 15-ը և 21-ը համարվում են Մարտի 15-ի և 21-ի օրերը:

Փորձեք լուծել (Try to solve) section with two chessboard diagrams labeled 'Խնդիր N1' and 'Խնդիր N2'. It includes chess notation and instructions for solving the puzzles.

Նախորդ համարի սկզբնական պատասխանները (Answers from the previous issue) section with a grid of letters and a small portrait of a man.